

եկած պաշտօնական գործով պատարագի ժամանակ բեմից յայտնեց մեր Ոգոստափառ Կայսեր Հիւանդութիւնը և ազդարարեց ամենքին՝ միաբանութեան և ժողովրդին, «Տէր ողորմեալ» ժամանակ աղօթել ն. Կայսերական Մեծութեան առողջութեան և թանգադին կենաց համար:

— Արժ. Եղիշէ վարդ. Մուրադեանց՝ Կարսի վիճակի յաջորդը՝ պաշտօնական գործով հոկտ. 20-ին կանչուած էր Եջմիածին: Արժ. Հայրը իւր գործը վերջացնելուց յետոյ կրկին վերադարձաւ իւր պաշտօնատեղին:

— Ս. Հայրապետի սրբատառ կոնդակով Արժ. Տ. Գարեգին վարդ. Սաթուհեան նշանակուած է վանական անտեսութիւնների վերահսկող:

— Շնորհունակ Ղերիգոր և Հմայեակ սարկաւազները Հոգեւոր Տիրոջ հրամանով Տփլիս գնացին, առաջինը բժշկուելու, իսկ երկրորդը տպարանական ժողովի ապառիկները հաւաքելու համար: Շնորհունակ սարկաւազը անցեալ տարի ևս Նիրակի գաւառն էր գնացել նոյն նպատակով և յաջողութեամբ կատարել իւր վրայ դրուած պարտաւորութիւնները:

— Հոգեւոր Տիրոջ սրբատառ կոնդակով Տըպարանական ժողովի նախագահ է նշանակուած Տ. Եղնիկ վարդապետ Գեանջեցեան, իսկ նորան օգնական Շնորհունակ Հմայեակի՝ Նիկողայոս և Խաչատուր սարկաւազները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐԱՐԱՏ»-Ի.

«Տարալ»-ի № 43-ում մի յօդուած է տպուած «Մամուլ և գրականութիւն» վերնագրով: Պ. յօդուածագիրը ի միջի այլոց խօսում է և «Արարատ»-ի Բ. և Թ. համարի մասին: Նորա ուշադրութիւնը գրաւել է է յատկապէս թէ և ոչ դրական կողմից՝ «Գիտութիւն և եկեղեցի» վերնագրով առաջնորդողը: Մեր ընթերցողները կ'ըշեն, թէ ի՞նչ էր այդ յօդուածի իմաստը: Գիտութիւնը մեր

եկեղեցու վերակենդանութեան անհրաժեշտ պայմաններից մէկն էր համարում այդ յօդուածի հեղինակը և լուսարանում էր յատկապէս պատմական աստուածաբանութեան նշանակութիւնը եկեղեցու գիտակցական և հեռեղական յառաջդիմութեան համար: Մեր եկեղեցու համար սրտացաւ և լուրջ մարդիկ պէտք է ուրախութեամբ ընդունէին այդ զաղափարը, ինչպէս որ նամակով էլ համակրութեան արտայայտութիւն ենք ստացել Թիֆլիսից: Եթէ «Տարալ»-ի խմբագրութիւնը այս խօսքը խմբագրական «քաղաքականութիւն» համարէ, որը տարաբաղդարար շատ սովորական է զարձած մեր լրագիրների համար, թող մի բաց նամակով իւր ցանկութիւնը յայտնէ և մենք պատրաստ ենք նորա կասկածը փարատելու:

Բայց «Տարալ»-ի պ. քննադատը մեր յօդուածի իմաստը, տկար կարողութեան թէ գիտաւորեալ նպատակով, չգիտենք, միայն այնքան է ըմբռնել, թէ աստուածաբան վարդապետները «կարծում են թէ մեր ժողովրդի մէջ նկատուող հակակրեական շարժման պատճառը ինտելիգենցիան է» (որի արժանաւոր մի անդամն էլ ի հարկէ պ. յօդուածագիրն է): Այն ինչ հէնց այդ հաստուածի սկզբում յիշուած է, թէ ժողովրդի եկեղեցուց սառելու պատճառները քաղաքական են՝ («Այս տխուր երևոյթը բազմութիւ պատճառների հրահանք է» ...) և զոցանից մէկն է ժողովրդի և եկեղեցականութեան որոշ դասի միջ եկեղեցու անցեալի մասին եղած գիտակցութեան պակասութիւնը: Այս խօսքերով չենք գրել, բայց իմաստն այս էր: Պ. քննադատը մեր յօդուածի իսկական նպատակը թողել և միայն լուսարանութեան համար դրուած մի կէտն է բռնել, այն էլ ինչպէս տեսանք, բոլորովին խեղաթիւրած:

Բայց այս բաւական չէ. «Ինտելիգենցիան» յատուկ սովորութեամբ մի հայհոյանք էլ վերան է աւելացրել, մեզ «պարծենկոտներ» անուանելով: Պ. քննադատը իւր նկատողութիւնը «Արարատ»-ի մասին հետեւեալ խօսքերով է վերջացնում. «Քիչ թէ շատ հետաքրքրութիւն ներկայացնում են միայն Գ. Բ. երկրագործական անհրաժեշտ գիտելիքները» և

մի քանի բաներ «Այլապէս»-ից: «Բայց որոշեալ էն ինչն» «Արարատ»-ի անապատս:

Վերջին խօսքերն արդէն, որ մենք ընդգծում ենք, բոլորովին պարզում են «Տարազ»-ի յօդուածագրի ընդունակութիւնն ու անձնաւորութիւնը: «Արարատ»-ի վերոյիշեալ համարի մէջ բացի «Գիտութիւն» և եկեղեցի, յօդուածից զետեղուած են և հետեւեալները. ա) Մայր Աթոռի լուրերն ու Արժ. Տ. Խաչի վարդապետի պեղումների նկարագրութիւնը՝ սեպագիր մեծ արձանագրութեան, նախնեաց ճարտարապետութեան մնացորդների և զննա-Քննիչի պատկերներով: բ) «Օտար եկեղեցիների» բաժինը, ուր նկարագրուած է եւրոպական եկեղեցիների հոգեւոր քաղաքակրթական շարժումները, հաստատութիւնները իրենց լաւ ու վատ կողմերով: գ) Ծնորհ. Նիկողայոս սարկաւազի «Գիւղական հոգեւորականութեան հոգային հարկի խնդիրը» յօդուածը, որ ներկայ կենսական հարցերից մէկին՝ քահանայութեան նիւթական բարեկարգութեան է վերաբերում: դ) «Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներ»-ը, որ պ. յօդուածագիրն էլ է բացատարէ հաւանել: ե) Շիրակի կենքից մի գողարկի պատկեր՝ Ն. Մովսիսեանի: զ) Պ. Աճառեանի Վարազդի բարբառի գիտնական ուսումնասիրութիւնը. ե) Պ. Մանուկ Արեղեանի լուրջ ուսումնասիրութիւնը, որ հաւանութիւն է ստացել մեր շատ բանասէրների կողմից և այդ հաւանութիւնը ընդհանրութեան մատչելի կդառնայ, երբ շուտով առանձին դրքով հրատարակուի և մոտենախօսական քննադատութիւններ գրուին այդ մասին: ը) «Վիպաշխարհ» վերնագրով յօդուածը, որ բժշկական ընկերութեան ժողովրդական մի հրատարակութեան թարգմանութիւնն է, ժողովրդին այդ ցաւի դէմ հրահանգներ տալու նպատակով: թ) Մանրալուրք. ժ) Յաւելուած՝ Հ. Յուսիկ վարդապետի մի ընդարձակ յօդուածը, որ մեր նոր պատմութեան ուսումնասիրութեան համար կարեւոր նիւթեր է մատակարարում:

Մենք գիտամար կրկնեցինք «Արարատ»-ի յօդուածների բովանդակութիւնը, որպէս զի պարզ լինի մեր ասելիքը: Այսքան կարեւոր և հետաքրքրական բովանդակութիւն ունեցող

համարը «Տարազի» յօդուածագրի համար մի անապատ է, որոնց մէջ իրրեւ օաղիսներ միայն «Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներն» ու «Մանրալուրքն» է նկատել: «Արարատ»-ը չէ անապատը, այլ ... եզրակացութիւնը թողնում ենք ընթերցողին: Ի՞նչ ասենք այն անձին, որին այդքան բազմակողմանի և լուրջ յօդուածներից միմիայն «Մանրալուրք»-ի նման յօդուածներն են հրաաքրքրական երեւցել: Պ. յօդուածագիրը պէտք է կամ ազէտ լինէր կամ անբարեխիղճ. հաւանական ենք համարում վերջինը, նա էլ «Մշակ»-ի «Մամուլի Տեսութեան» հեղինակին է հետեւել, որ ընդհանուր խօսքերով և որոշ սխառեմով ձեռնարկում է անուանարկել և վայր ձգել «Իջմիածնի աստուածաբաններ»-ի վարկը: Ծնորհաւորում ենք «Տարազ»-ի աշխատակցի այս նոր քայլը: Թողէք պարօնների, Զեր կանխակալ կարծիքները, կամաւ մի կուրացէք և փոքր ինչ բարեխիղճ եղէք:

«Տարազ»-ի պ. խմբագրի անշաւ հայեցողութեանն ենք թողնում դատելու, թէ «Արարատ»-ի յիշեալ համարի յօդուածները սիրով չէ՞ր տպագրել իւր լիւրժութիւնը: Մենք այդպիսի գիտաւարեալ նկատողութիւնների պատասխանելու սովոր չենք, թէ և «Մշակ»-ի մէջ համարեա ամեն համարում «աստուածաբանների» հասցեով անարդար ակնարկներ կան, մենք մտածում էինք, որ ամենքին յայտնի է, թէ «Մշակ»-ի արհեստն է այդ, բայց ցաւում ենք, որ «Տարազ»-ի խմբագիրն էլ թոյլ է տուել իւր աշխատակցին ճիշդ նոյն ճանապարհով ընթանալու: Այլ դիւրաւ որեւէ չենք կամենում, բայց չէինք ցանկալի, որ ուրիշներին անարդար դատաւասանի ենթարկելին ու անուանարկելը «Տարազում» սովորութիւն դառնար:

* *

Բազմավեպ «Իստապաճ պատկերազարդ տետրակը» որբերի օգտին՝ հրատարակուած է արդէն: Մենք հարկ չենք համարում քննադատել մի գործ, որ այդ նպատակով մեր խմբագրութեան չէ ուղարկուած: Բայց լուել չենք կարող մի նկատողութեան համար, որ Հ. Նրեմեանն արել է «Պատառ մը հաց հայ որբին» վերնագրով առաջնորդող յօդուածի մէջ:

Մենք այդ նկատողութիւնը առանց ուշադրութեան կ'ընդունէինք, եթէ կապ չունենար մի ուրիշ ընդարձակ յօդուածի հետ, որ նոյն Հ. Երեմեանը հրատարակել է «Կրօնք և Ազգութիւն» վերնագրով «Բազմավէպ»-ի Յօւնիսի տետրակում:

Նախ պարզենք խնդրի էութիւնը:

«Բազմավէպ»-ի խմբագրութիւնը՝ Օգնութիւն հայ որդիներին՝ վերնագրով մի յայտարարութիւն էր ուղարկել մեզ, այդ մասին «Արարատ»-ի Մարտի տետրակում տեղեկութիւն տալուց յետոյ՝ հետեւեալ տողերն էինք աւելացրել. «Գործն ինքնըստինքեան համակրելի է և արժանի խրախուսանաց, եթէ հայ կաթողիկոսները ինամատարութեան համար գործադրուի»: Այս նկատողութիւնը Հ. Երեմեանը յիշել էր իւր «Կրօնք և Ազգութիւն» յօդուածի մէջ և մի հարցով վերջացրել. «Այս գրութեան նպատակն ի՞նչ է»: Պարտաւոր ենք այդ հարցի պատասխանը տալ: Առանց դորան էլ Հ. Երեմեանի յօդուածը վերաբերում էր մի խնդրի, որ վաղուց յեղիղուում է լրագրութեան մէջ և կապ ունի մեր նկատողութեան խմաստի հետ: Հ. Երեմեանին պատասխանում ենք փոքր ինչ ընդարձակ կերպով, որպէս զի մեր միտքը բոլորովին պարզ լինի, թէ մեր ընթերցողների և թէ Մխիթարեան Հայրերի համար:

Մեր ընթերցողներին յայտնի է, թէ ինչ հայեացք ունինք որբերի ինամատարութեան վերայ: Փանկաց առիթ ենք ունեցել զրելու այդ մասին, որբանոցը և բարեգործական հաստատութիւնները եկեղեցական կեանքի էական յատկանիշներից մէկն ենք համարում*: Նոյն համակրութիւնը մենք յայտնել ենք և Վենետիկի Մխիթարեանների ձեռնարկութեան համար, եթէ նոքա միայն հայ կաթողիկոսները ինամատարութեան համար գործադրեն իրենց հաւաքած նպատակները: Անշուշտ Հ. Երեմեանի նկատողութեան առիթը մեր բերած վերոյիշեալ տողերն են եղել, բայց այդ վերաւորանքը համարում ենք անտեղի

և անարդար: Այ իրենք Մխիթարեանները, և ոչ մենք սպասել կարող էինք, թէ նոքա այնպիսի խոշոր գումարներ պիտի ստանան, որ քուլը հայ կաթողիկոսներին ինամատարութեան յետոյ՝ բաժին ունենան նաև Հայաստանեայց եկեղեցու որբերի համար: Այդ պատճառով էլ աւելի շաղապակայաբար և ուղիւ էինք համարում, որ Մխիթարեանները միմիայն կաթողիկոսները ինամատարութեան համար հոգան: Եթէ այս ձեռով դնեն խնդիրը և մենք մեր տկար կարողութեան չափ չօգնենք, արժանի ենք դատապարտութեան: Հայ կաթողիկոսները նոյնպէս արժանի են մեր զթութեան, ինչպէս և Հայաստանեայց եկեղեցու որբերը: Երկուսն էլ մեր ազգակիցներն են և իրեւ որբ արժանի մեր զթութեան: Բայց կաթողիկոս հայ որբը պէտք է Մխիթարեան հայրերից ստանայ իւր կրթութիւնն ու ինամատարութիւնը: Հայաստանեայց եկեղեցու որբը Ազգային Պատրիարքարանի հսկողութեան տակ հաստատուած որբանոցներում: Ի՞նչու: Որովհետեւ Մխիթարեան Հայրերը չեն կարող ուրանալ, որ անկարող են Հայաստանեայց եկեղեցու որբին կրօնական դաստիարակութիւն ներշնչելիս բոլորովին մոռանալ իրենց կաթողիկական հայեացքները, ինչպէս որ մենք էլ անկարող ենք հայ կաթողիկոսներին դաստիարակելիս մոռանալ մեր ազգային եկեղեցու աւանդութիւնները և մեր հայեացքները: Աւելի բան էր, եթէ ոչ մի հոգացողութիւն չլինէր մեր եկեղեցու կողմից և հարկաւոր լինէր թշուառի կեանքն ազատել մահուան ձեռքից, այն ժամանակ ի հարկէ կրօնական խորութեան մասին խօսք լինել չէր կարող: Այս մի այնպիսի պարզ խնդիր է, որ կարծեմ ոչ ոք աւարկելու բան չպէտք է ունենայ:

Բայց չէ, մեր արդար ցանկութիւնը նոցա համար մինչև իսկ վերաւորական է երեւայել, որովհետեւ մենք երկդիմի քաղաքականութիւնից խուսափելով խուսափել ենք ուստի և Հ. Երեմեանը չբաւականանալով Բազմավէպի մէջ «Կրօնք և Ազգութիւն» յօդուածի մէջ նկատողութիւն անելուց, կրկնել է և Որբունի պատկերապարզ հրատարակութեան մէջ: «Որբունի» տետրակի առաջնորդով վերջին բառերը զրուած են հայ որբ

* Տես մեր պատմական ծեսութիւնը «Եկեղեցին և աղաաների ինամատարութեան գործը», Արարատ. 1897. Մայիս, Յունիս, Յուլիս և 1898 թ. Յունիս, Յուլիս և Օգոստոս իսկ «Օգոստոս եկեղեցիների» բաժնում շատ յաճախ:

բուհի բերանից: Բազմավէպ լսել է որբուհի պատառ մը հայց կոչելու և ամբողջ հայ լեռադրութիւնը հեռանելով Բազմավէպին արձագանգ է տուել նոյն կոչին: Բայց միայն Արարատ ձայն խոստովութեան հանեց: զբութում է, Հ. Երեմեան: Մեր արդար ցանկութեան պատասխանն է այս: Բայց որպէս զի խնդիրը աւելի պարզեմք պէտք է Հ. Երեմեանի Վրժեք և ազգութիւն: Եղբուս խնայան էլ մէջ բերենք:

Հ. Երեմեան կամենում է այն միտքը յայտնել թէ կրօնների տարբերութիւնը արգելք չպէտք է լինին Հայերիս մի ազգութիւն զգալու: Շատ լաւ, մենք էլ համակրում ենք այս միտքը: Հակառակ ենք միանգամայն կրօնական երկպառակութիւնների և ատելութիւնների: կրօնը սէր է քարոզում և ոչ ատելութիւն:

Բայց ահա նոյն յօդուածակիրը ի՛նչ է ասում իւր վերջաբանում: Վերջին դէպքերի պատճառով շատ հայեր բողոքականութիւն ընդունեցին և ամենքը լռեցին (մի՞թէ), իսկ «փոքր մաս մի առժամանակեայ կաթոլիկիոյ դաւանանքը կրնդունի» և ահա վայնասունը ամէն կողմէն կը զօրանայ: Բողոքականները արհամարհում են մեր Ս. Թարգմանիչներին, իսկ կաթոլիկ քահանան, «զանոնք ամէնը, սուրբ սեղանին վրայ կը բազմեցնէ, իր նուիրազործեալ սուրբերն կընդունի» և անոնց բարեխօսութիւնը կը հայցէ իր հօտին վրայ: կաթոլիկէ քահանային դաւանանքը որ ամենափոքր տարբերութիւն մը ունի լուսաւորչականներէն, բայց դարձեալ մոլեռանդութիւնը կը մղէ զոչելու «ի խաչ հան զգա» — կղէք բողոքական՝ բայց ոչ կաթոլիկ:

Վերջին տողերը շատ բնորոշ են Մխիթարեան Հայրերի համար: Բողոքովին սխալ է ի հարկէ պնդելը, թէ Հայաստանեայց եկեղեցու հարազատներից որ և է մէկը հաւանութիւն տայ իւր հաւատակիցներին բողոքականութիւն ընդունելու: Բայց միւս կողմից Հ. Երեմեանը կամենում է, որ մենք անտարբեր լինինք Հայաստանեայց եկեղեցու հաւաններին կաթոլիկութիւն ընդունելու վերաբերմամբ: որովհետեւ հայ կաթոլիկը ընդունում է Ղեւոնդեանց սրբութիւնը կամ չնչին

է համարում՝ Հայոց և կաթոլիկ եկեղեցու մէջ եղած տարբերութիւնները: Շատ բնորոշ ենք համարում այս գիծը Մխիթարեանների համար: որովհետեւ նոքա դաւանաբանական մի հայեացք են ստեղծել Չամչեանից սկսած, որ Հայոց եկեղեցու նշանաւորագոյն հայրապետներն ու սրբերը ճիշդ կաթոլիկ են եղել, — ուրեմն ոչ թէ իրենք են անջատուել Հայոց եկեղեցուց: այլ մենք ենք անհաւատարիմ՝ զանուէլ մեր նախնեաց աւանդութիւններին: Լուսաւորիչ, Ս. Սահակ Պարթև, Ս. Զեղի, Ննորհայրի կաթոլիկներ են եղել:

Այս պատմական սխալը, որ կարող էր մինչև իսկ լաւագոյն միառմենից ծագած լինել, Մխիթարեանները դարձրել են իրենց համար դաւանաբանական ճիշտութիւն և ոչ մի առիթ չեն փախցնում իրենց հրատարակած ուսումնասիրութիւնների մէջ պատշաճ տեղն արտայայտել: Սրինակ Հ. Ղեւոնդ Ալիշանը, որ ընդհանուր հայութեան համակրանքն է վայելում իրաւամբ, իւր գիտական և բանաստեղծական աշխատութիւնների համար, նոյն իսկ Մխիթարեանների միակ փոքր ծեղունի հ. Ալիշանը, գերծ չէ պատմական և դաւանաբանական այս սխալ ուղղութիւնից: Դեռ երէկ էր, որ նոյն Մխիթարեանների յայտնի անդամներից մէկը հ. Սարգսեան Ս. Զեղեցու ժամանակակից և գործակից Խոսրովիկ Թարգմանչին կաթոլիկ ուղղութեան հեռու գէր հրատարակում: այն ինչ նորա գրութիւնները բոլորովին հակառակն են ցոյց տալիս: Մեր եկեղեցին պապի գերիշխանութիւնը չէ ճանաչել և այժմ էլ ցանկութիւն չունինք այդ գերիշխանութիւնն ու դորա հետ կապուած անսխալականութիւնը ճանաչելու: Կարծեմ իրաւունք ունինք Մխիթարեան հայրերից տարբեր համոզմունք ունենալու այս խնդրում:

Այս հանգամանքներն ի նկատի ունենալով՝ արդար էր միանգամայն մեր ցանկութիւնը — թէ և կաթոլիկ բայց մեր ազգակից Հայրերը պէտք է միայն կաթոլիկ որբերին խնամեն և դատարարակեն: Հայաստանեայց եկեղեցու որբին իրենց խնամքի տակ առնելով՝ նոքա մինչև այժմ ցոյց տուած և քարոզած համոզմունքները չպէտք է ծածկեն, այլ պէտք է այնպէս քարոզեն, ինչպէս իրենք են համոզուած:

Ապա ուրեմն արդարութիւնն այն է, որ Մխիթարեանները նուէրներ հաւաքեն կաթոլիկ մեր արիւնակից որբերի համար, իսկ Հայաստանեայց եկեղեցու որբերին թողնեն Պատրիարքարանի հսկողութեան տակ հաստատուած որբանոցներին: Գթութիւնը ազգութեան և կրօնքի մէջ խարութիւն չպէտք է զնէ, կրքի նուժ ենք, բայց էլ՝ անհրաժեշտութեամբ է: Կարծեմ անհրաժեշտութիւնը չէ ստիպում, որ Մխիթարեան Հայրերը կաթոլիկ հայ որբերին թողնեն և մեր եկեղեցու որբերին կրթեն: Յոյս ունինք որ մեր միտքը բոլորովին պարզ է, թէ Վենետիկի Մխիթարեան Հայրերի և թէ մեր ընթերցողներին համար:

Ենք յարգում եմք Մխիթարեան Հայրերի գիտական աշխատութիւնը և մինչև իսկ երախտապարտ ենք զգում մեզ նոցա մեր մատենադրութեան ուսումնասիրութեան մէջ ցոյց տուած ջանքերի համար, մեր ազգակից եղբայրներն ենք համարում նրանց, բայց ոչ միայն անտարբեր մնալ չենք կարող նոցա սխալ հայեացքների վերաբերութեամբ, որ արդէն գիտութեան գործ է, այլ և ձեռքները իրար չափ կտալու ենք, եթէ նոքա մեր ժողովրդի մէջ կաթոլիկութեան ոգի սերմանել կամենան միտնարութեամբ կամ գրական վստահներով: Եւր նուիրական և սրբազան պարտքն է մաքառել Հայաստանեայց եկեղեցու զաւակների մէջ նկատուած որ և է կրօնափոխական շարժման դէմ, լինի այդ բողոքականի, իտալացի ճիզուիթի, թէ հայ կաթոլիկի կողմից:

*
**

Արցախի Զիրբայէլ գաւառի Առաքել գիւղի Արժ. Տ. Մակար քահանայ Գրիգորեան և Վանքի եկեղեցու ծխական պ. Գրիգոր Տ. Պետրոսեանց «Արարատ»-ի խմբագրութեան կրօնական — ծխական խնդիրների վերաբերեալ մի քանի հարցեր են առաջարկել և բացատրութիւն խնդրել: Հետեւեալ համարում կաշխատենք նոցա ցանկութեան բաւարարութիւն տալ:

*
**

Ղուբայի Արժ. Տ. Խաչատուր քահանայ Փանեանց թարգմանել է և «Արարատ»-ի մէջ տպագրելու համար ուղարկել պրոփ. Նիկոլայ քահանայ Էլիճեակու «Մարդկային կեանքի վախճանական նպատակը» վերնագրով փոքրիկ աշխատութիւնը:

ՏԼՃԿԱՆՅՈՒՄ

— Բաբերդի Ազգ. երկու վարժարանաց միութեան հարկը կը շեշտուի այս տարի Մայր վարժարանի պիւտճէն բարձրացաւ 250 ոսկի, իսկ Երամեանինը 120-ի. Մայր դպրոցը ունի եկամուտ 100 ոսկի եկեղեցիէն և կալուածներէն, (հաստատուն), 50 ոսկի թոշակներէ (անվճարելի գրեթէ), 72 ոսկի Պատրիարքարանէն (յաջորդ տարին վերջանալի), գումար 222: Երամեանը ունի 90 ոսկի եկեղեցիէն և կալուածներէն, թոշակ ոչինչ: Երդ համեմատելով մուտքն ու ելքը՝ երկու վարժարանաց բացն է ըստ երեւոյթին 60 ոսկի, իսկ իրականը 150:

— Զէյթունէն Պատրիարքարան հասած նամակէ մը կը տեղեկանանք թէ օգոստոս 9-ին հրդեհ ծագելով, անմիջապէս շատ մը մարդիկ հրդեհին վայրը փութացեր են: Ապա ջրհան մը ու խումբ մը զօրքեր հասնելով աշխատել են հրդեհը մարելու: Հրդեհին վայրը փութացեր են տեղւոյն Գայմագամը և բոլոր կառավարչական պաշտօնականները, Հրդեհը տեւեր է 3 ժամ և 16 տուն այրել են. ուրիշ քանի մը տուններ ալ փլուզել են: Հրդեհին ընթացքը կասեցնելու համար Գարկաղա թաղը՝ որ ամբողջովին այրած է, 1050 օսմ. ոսկիէ վնաս մը ունի: Հրդեհին պատճառաւ 116 հոգի անպատասպար մնացած են օգնութեան կարօտ վիճակի մը մէջ:

— Պատրիարքարանի կիմացներն թէ Եւլու վայել Գուրտպէլէն գիւղին բնակիչներէն քանի մը տարեկան երիտասարդ մը տամնէկ տարեկան սրբ աղջկան մը հետ ամուսնանալ ուզելով՝ կը դիմէ տեղւոյն քահանաներուն՝ Նիկոմիդիոյ առաջնորդէն արտօնութիւն ոտանալու համար: Քահանաները աղջկան անշափահաս ըլլալը հաւանքելով, կը յորդորեն երիտասարդը, որ ետ կենայ այդ անյարմար ամուսնութենէն, և կարգիլեն պսակը: Բայց երիտասարդը չուզելով իր մտադրութենէն ետ կենալ, կը դիմէ Ամբակում վարդապետին՝ որ Հայ-Հռոմէականութիւնը ընդունած է, և անոր միջոցաւ կը պտակուի յիշեալ անշափահաս աղջկան հետ: